Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
31 հոկտեմբերի 2024 թվականի N 432-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հոկտեմբերի 31–ից

# «Ավանդային արշավի» իրականացման պայմաններ

## 1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 31.10.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Ավանդ՝** Արշավի շրջանակներում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում, Idram&IDBank հավելվածում 400,000 ՀՀ դրամ և ավելի նոր ձևակերպված ժամկետային ավանդ:
1.3 **Ավանդատու՝** Արշավի շրջանակներում ՀՀ դրամ արժույթով Ավանդ ձևակերպած ֆիզիկական անձ հանդիսացող գործող և նոր հաճախորդները:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

## 2. Արշավի պայմաններ.

2.1 Այն ֆիզիկական անձինք, ովքեր կձևակերպեն 400,000 ՀՀ դրամ և ավելի Ավանդ 31.10.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ Բանկի մասնաճյուղերում, Idram&IDBank հավելվածում կմասնակցեն 5 հատ iPhone 16 pro հեռախոսների խաղարկությանը:
2.2 Խաղարկությանը չեն մասնակցի այն Ավանդատուները, ովքեր Արշավի ընթացքում կխզեն Բանկում գործող ավանդը:
2.3 Խաղարկությունը կիրականացվի Արշավի ավարտից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով: Խաղարկությունը կհեռարձակվի Բանկի ֆեյսբուքյան և YouTube-յան պաշտոնական էջերում՝ ուղիղ հեռարձակմամբ:
2.4 Արշավի շրջանակներում անկախ ներդրված Ավանդի քանակից Ավանդատուն կմասնակցի խաղարկությանը մեկ անգամ:
2.5 Խաղարկությանը կմասնակցեն այն Ավանդատուները, ովքեր Արշավի ընթացքում կձևակերպեն նոր ավանդ և 31.12.2024թ-ի դրությամբ տվյալ Ավանդը կլինի գործող:
2.6 Խաղարկությանը մասնակցելու է Ավանդատուի անվան և ազգանվան առաջին տառերը և ավանդային պայմանագրի համարը (օրինակ՝ Ա. Կ. 009/21/00010), ընդ որում Արշավի շրջանակներում մեկից ավել Ավանդ ներդնելու դեպքում խաղարկությանը կմասնակցի ձևակերպված Ավանդներից որևէ մեկի պայմանագրի համարը:
2.7 Խաղարկության արդյունքում պատահականության սկզբունքով ընտրված 5 Ավանդատուների հետ Բանկը կապ կհաստատի 3 աշխատանքային օրերի ընթացքում: Մրցանակը ստանալու համար հարկավոր է Ավանդատուի ներկայությունը Բանկի գլխամասային գրասենյակում՝ անձը հաստատող

փաստաթղթով, մինչև 28.02.2025թ-ը ներառյալ: Նախքան մրցանակի ստացումը Ավանդատուն պետք է ստորագրի մրցանակի ստացման վերաբերյալ ստացականը:

2.8 Խաղարկությանը չեն կարող մասնակցել «Այդի Գրուփ» ՓԲԸ-ի աշխատակիցները:

2.9 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.10 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: